ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. օգոստոսի 19-ից 23-ը Սոնգդո (Կորեայի Հանրապետություն)՝ շրջակա միջավայրի նախարար Էրիկ Գրիգորյանի գործուղման վերաբերյալ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**

   Էրիկ Գրիգորյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**

   Շրջակա միջավայրի նախարար

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ</u>**

   Սոնգդո (Կորեայի Հանրապետություն)

   2019թ. օգոստոսի 19-ից 23-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**

   Կանաչ կլիմայի հիմնադրամ (GCF)

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**

   Մասնակցություն «Կանաչ կլիմայի հիմնադրամի ծրագրերի վերաբերյալ գլոբալ կոնֆերանսին»:

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ</u>**

Կոնֆերանսի շրջանակներում տեղի է ունեցել նախարարական պանել քննարկում, որի ընթացքում այլ մասնակից նախարարների հետ ներկայացրել եմ Հայաստանի խոցելիությունը կլիմայի փոփոխությանը, կլիմայի ոլորտում իրականացվող և սպասվող գործողություններն ուղղված կլիմայի փոփոխության մեղմմանը և հարմարվողականությանը: Ներկայացրել եմ Հայաստանում ազգային կարողությունների հզորացման կարևորությունը՝ ոլորտում երկկողմ և բազմակողմ ձևաչափերով, առավել արդյունավետ գործողություններ իրականացնելու նպատակով:

Բարձրաստիճան կոնֆերանսի ընթացքում քննարկվել են հետևյալ հարցերը.

- երկրների կողմից Հիմնադրամի ներքո մշակվող ազգային ծրագրերի կարևորությունը՝ երկկողմ համագործակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով,
- հիմնադրամի աջակցությամբ կլիմայական հավակնոտ մեղմման և հարմարվողականության գործողություններ իրականացնելը, Կանաչ կլիմայի հիմնադրամի առաջիկա չորս տարիների ռազմավարական նպատակները, հիմնադրամի աջակցությամբ ոլորտային աշխատանքներում մասնավոր հատվածի ներգրավվածության

հնարավորությունները, ինչպես նաև ազգային կարողությունների հզորացումը:

7. ԵՐԿԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Վերոնշյալ հանդիպաման ընթացքում երկկողմ հանդիպումներ եմ ունեցել կանաչ կլիմայի հիմնադրամի գործադիր տնօրեն Յանիկ Գլեմարեկի հետ, որի ընթացքում քննարկել ենք Հայաստանի և կանաչ կլիմայի հիմնադրամի հմագործակցության շրջանակներում ընթացիկ ծրագրերը, ինչպես նաև հետագա համագործակցության հեռանկարները՝ մասնավորապես Հայաստանումհիմնադրամի կողմից դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում «Պատրաստվածության և աջակցության» այլ ծրագրեր իրականացնելու հնարավորությունները: Վերջիններս կաջակցեն Հայաստանում ազգային կարողությունների հզորացմանը, որն էլ իր հերթին կնպաստի երկկողմ համագործակցության արդյունավետությանը: կենսոլորտային պահպանավայրերի և գեոպարկերի հիմնման գործընթացը:

Երկկողմ հանդիպում եմ ունեցել նաև Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության գլխավոր քարտուղարի տեղակալ Ելենա Մանաենկովայի հետ: Հանդիպման ընթացքում քննարվել է Հայաստանում միջազգային լավագույն փորձի հիման վրա միասնական մոնիտորինգի կենտրոնի ստեղծման հնարավորությունները՝ մասնավորապես քննարկվել է Շվեյցարիայի փորձի կիրառման հնարավորությունը: Այդ նպատակով քննարկվել է Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության կողմից ֆինանսական և տեխնիկական աջակցության շրջանակները:

8. ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կանաչ կլիմայի հիմնադրամի գործադիր տնօրեն Յանիկ Գլեմարեկի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն առաջիկայում շրջակա միջավայրի նախարարության կողմից՝ որպես հիմնադրամի ազգային լիազոր մարմին ներկայացնել «Պատրաստվածության և աջակցության» ծրագրային առաջարկներ, որին կհաջորդի կարծիքների փոխանակում հիմնադրամի և շրջակա միջավայրի նախարարության միջև: Լավագույն ծրագրային առաջարկների համար շրջակա միջավայրի նախարարության համակարգման ներքո և հիմնադրամի տեխնիկական աջակցության միջոցով կմշակվեն «Պատրաստվածության և աջակցության» ծրագրային հայտեր:

Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության գլխավոր քարտուղարի տեղակալ Ելենա Մանաենկովայի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն կազմակերպել մասնագիտական եռակողմ քննարկում շրջակա միջավայրի նախարարության, Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության և Շվեյցարիայի մոնիտորինգի կենտրոնի աշխատակիցներ միջև: Քննարկումն ուղղված կլինի Շվեյցարիայի մոնիտորինգի կենտրոնի

օրինակի հիման վրա Հայաստանում միասնական մոնիտորինգի կենտրոնի ստեղծման հնարավորությունները և Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության աջակցության շրջանակները:

Շրջակա միջավայրի նախարար

Էրիկ Գրիգորյան

X _____